

## ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

0.01003 6469681

Նիսի բարենորդութիւնները Վերջին ժամանակներում միուսաց եկեղեցական ծխական կանոնադրութիւնը մի քանի անգամ յատուել յանձնաժողովների ձևորով ենթարկուել է մի շարք փոփոխութիւնների: 1906 թ. նախագծի համաձայն խթաքանչիւր ծխական համայնքը պէտք է ունենայ իւր հոգեոր կազմը, բաղկացած մի քահանայից և մի սաղմոսասամիջյ: Մոտ 3000 հոգի ունեցող համայնքը պէտք է ունենայ մի քահանայ, մի սարկաւագ և մի սաղմոսասամ: Հոգեոր կազմի անդամներն ընտրուեմ և արձակուեմ են առաջնորդից: Եթէ ծխականներն իրենք ևս ցանկանան հրաւիրել իրենց ուղած անձն հոգեոր պաշտօնի համար՝ կարող են միջնորդել այդ մասին առաջնորդին, բայց այդ հոգեոր պաշտօնի կոչուող անձն պէտք է համապատասխան լինի սահմանուած պահանջներին: Աղջակա դէպարտամենտ յարմարութեանց տեսակէտից թեմական վարչութեանց մէջ յայտարարուեմ է այն անձանց ցաւցակը, որոնց թեմական իշխանութիւնը ճանաչում է իրեւ գոհացուցիչ թեկնածուներ հոգեոր պաշտօնների համար: Ծովիր պարտաւոր է հոգալ հոգեոր պաշտօննեայի համար և՛ բնակարան և՛ նիւթական միջոց: Ծխականներ համարուեմ են ուղղափառ դաւանութեան պատկանող ըոլոր տիտանանձններ և նոցա ընտանիքները, որոնք ապրում են ծխի սահմաններում: Խթաքանչիւր ծուխ իւր զաւակների կրթութեան համար կարող է ունենալ մի և կամ աւելի ծխական ուսումնարաններ, որոնց հոգացողութիւնը վերապահնեում է ծխական ինքնայլար մարմիններին:

Մուխը համբածայն իւր միջոցների ու կարիքների կարող է բաց անել և այլ տիպի զպրացներ, ինչպէս օրինակ՝ երկրագործական գիւղատնտեսական արհեստների, կարող են հիմնարկել եկեղեցական գրադարաններ, ընթերցարաններ, կիրակնօրեայ դրաբոցներ, ապաստարաններ, աղքատանոցներ և այլ բարեղործական հաստատութիւններ:

Ծխական եկամուտները բաժանվում են երեք տեսակի, եկեղեցական, եկեղեցու պաշտօնեաներին և յատուկ ծխականներին պատկանեալ Եկեղեցական կոչում են այն եկամուտները, որոնք

լինում են յանուն տաճարի, ինչպէս օրինակ մոմավաճառութիւնից, թարախներից և արկղիկներից և այլ գրամագրութիւններ՝ նոյնապէս տաճարին նուիրաբերած, եկեղեցական պաշտօնեաներին պատկանում են այն եկամուտները՝ որոնք տրւում են նոյն պահպանութեան համար: Ծիսական եկամուտներ համարում են այն գումարները, որ ծխականները միմեանց մէջ ժողովում են, և կամ եկեղեցում յատուկ այդ նպատակով թարախ են մանածում, և կամ այլ միջոցներով գումար են ձեռք բերում ծխական կարիքների համար գրծադրերու, (եկեղեցու, եկեղեցական պաշտօնեաների, զպրոցների և այլ ծխական հաստատութիւնների պահպանութեան համար): Բոլոր եկեղեցական և եկեղեցու պաշտօնեաներին պատեանեալ գումարները, բացառութեամբ եկեղեցու պաշտօնեաների եկամուտներից, գտնուում են ծխի կառավարութեան ներքոյ, որը ծխական խորհրդի որոշումով գրծադրումէ այդ գումարները իրենց նախարոշած նպատակների համար: Եկեղեցական գումարները ծախուռում են ընդհանուր թեմական և ընդհանուր եկեղեցական կարիքների վրայ, իսկ մնացորդները եկեղեցական գումարների կարող են զրծադրուել և տեղական ծխական կարիքների համար: Եկեղեցական պաշտօնեաների անունով եղած գումարները ծախուռում են միմիայն նրանց համար: Ծուխն ունի իրաւարանական անձի (յօրիգինալ լուծ) իրաւունքներ և կարող է ձեռք բերել օրինական կարգով անշարժ կայքեր:

Համաձայն 1906 թ. նախադի ծխական ինքնակառավարութեան մարմինները հանդիսանում են ծխական ժողովը, և ծխական խորհուրդը: Ծիսական ժողովում և վճռում են եկեղեցական-ծխական կեանքի բոլոր կարեւոր հարցերը: Ծիսական ժողովն ընտրումէ ծխական խորհրդի անդամներին, եկեղեցու երեցփոխին, Վերաստուգիչ Յանձնաժողովի անդամներին, որոնք քննում են եկեղեցական խորհրդի հաշիւնները, թեկնածուներ հոգնոր պաշտօնեաների նախարոշուած սահմաններում, որոնումէ նիւթական միջոցներ բաւականութիւն տալու ծխական կարիքներին, և այդ միջոցներից կազմումէ իւր ծխական դրամարկղը, վնասումէ միջոցներ աղդելու ծխականների վրայ՝ բարձրացնելու նրանց բարոյական-կրօնական կեանքը: Ծիսական խորհրդի զիկուցման համաձայն՝ ծխական ժողովը իրաւունք ունի նոյն ծխի անդամներից մէկն ու մէկի վատ գարքի մասին եղբայրական դատ անել և յայտնի արատաւորուած անձին նոյն իսկ զրկել ձայնի իրաւունքից ծխական ժողովներում և կամ պաշտօնավարելու եկեղեցական հաստատութեանց մէջ: Ծիսական ժողովը ձեռք է առնում միջոցներ կառելու հակակրօնական և ազանդների ուսմունքի դէմ, որի համար և կարող է կազմակերպել միստիօներական շրջաններ: Կըր-

թական և բարեգործական հաստատութիւններին կից նա կարող է ունենալ և տնտեսական՝ ինչպէս օրինակ փոխառուութեան և թաղման նպաստող դրամարկղներ։ Ծխական ժողովը վճռում է ծխականներից գործ որոշ գումարներ և դրամական տուրքեր, որոնք և ունին օրինական ոյժ և կարող են ստանալ դատաստանական ձանապարհով։ Ծխական ժողովներում վճռական ձայնի իրաւունք ստանում են 25 տարեկանից ոչ պակաս արական ծխականները, առանց ի նկատի առնելու նրանց նիւթական կարողութեան ցենզոր, իսկ դրամական գործերի մէջ վճռական ձայն ունենում են նոքա միայն, որոնք մասնակցում են ծխական ժողովների կողմից որոշուած տուրքերի վճարման։ Չեն թոյլատրում մասնակցելու ծխական ժողովներին այն անձանց, որոնք գտնուում են քննութեան և դատաստանի տակ այնպիսի յանցագործութեան պատճառով, որ կարող է նորան ենթարկել իրաւունքների սահմանափակման վտանգին։ Իրաւունք չունեն մասնակցելու այլ և աղանդաւորները, ուղղափառ հաւատն անարգողները, յայտնի շնացողներ և վատահամբաւ մարդիկ, խոստովանութեան և սուրբ հաղորդութիւնն չընդունող քրիստոնէական պարտքն կատարելու թերացող անձինք, նայած հանգամանքներին, զրկւում են ծխական ժողովին մասնակցելուց։

Հերթական ծխական ժողովները դումարւում են տարեկան երկու անգամ. կարեոր զէպքերում կարող է և գումարուել արտակարգ ժողով, որպէսզի ծխական ժողովը կայանայ, անհրաժեշտ է՝ որ ներկայ լինեն վճռական ձայնի իրաւունք ունեցող ծխականների <sup>1/10-</sup>ը։ Նախագահում է ժողովին եկեղեցու աւագ քահանան և կամ նորան փոխարինող քահանան։ Վճիրը կայանում է ձայնների հաւատար մեծամասնութեամբ եթէ նախագահը համաձայն չէ, այդ դէպքում գործը անցնում է գործակալական խորհրդին մասնակցութեամբ ծխական ժողովին ներկայացուցիչների։ Աչքի ընկնող կարեոր վճիրներ ներկայացւում է ի հաստատութիւն թիւմական իշխանութեան։ Այն ծխականները, որոնք անբաւական են ծխական ժողովի վճռից, կարող են բողոքել գործակալական խորհրդին Ծխական խորհուրդը ներկայանում է իբրև ծխական ժողովների վճիրներն իրագործող մարմին։ Ծխական խորհուրդը բաղկացած է եկեղեցու պաշտօնեաններից, երեսիուից, ծխի ներկայացուցիչներից, որոնք ընտրուում են ծխական ժողովին երեք տարով թուռվ 12 հոգուց ոչ աւելի և այն անձերից, որոնք կասավարում են եկեղեցական հաստատութիւնները։ Խորհրդի ընտրուած անդամներից մի երորդը իւրաքանչիւր տարի հեռանում է և փախարինում են նորերը։ Ծխական խորհրդի նախագահը նոյն անձն է, ինչ որ ծխական ժողովում։ Ծխական խորհրդի նիստերը կայանում են համա-

ձայն պահանջած թուի, բայց ոչ պակաս քան ամիսը մի անգամ ծիրական խորհուրդի վճիռն կայանում է հասարակ մեծամասնութեամբ Եկեղեցական խորհրդին պատկանում են հետեւալ գունդ ցիաները. ծխի անդամների կրօնական բարոյական դրութեան փերանկողութիւնը, խղճի գատաստան այն գործերի վերաբերեալ, որոնք կարող են վերջանալ կողմերի հաշտութեամբ՝ վերջիններիս համաձայնութեան դէպրում. իրականացնելու այն միջոցները, որոնցով պէտք է կռուել հակալրօնական և աղանդների ուսմունքի ընդդէմ. պարտականութիւն հետեւ տաճարի համար ունենալու բարեկարգիչ. վերանոկողութիւն ծխական զգրոցների մէջ գասաւանգութեան ուղղութեան վրայ, մասնակցելով և ուսուցիչների թեկնածուների ընտրութեան գործում. Ծխական խորհուրդը ընտրում է ծխական հաստատութիւնների կառավարիչների. Նորան է թողնուում ծխի նիւթեկան միջոցները մեծացնելու հոգացողութեան խնդիրը. Կառավարելու ծխական հաստատութիւնները, ծխականների թուի ցուցակների վարումն. Իւրաքանչիւր տարի ծխական խորհուրդը իւր գործունէութեան մասին ծխական ժողովին ներկայացնում է հաշիւ:

Ահա վերոյիշեալ կէտերն են եղել 1906 թ. նախագծի էական մասները. Այդ թուից յետոյ նոյնպէս Ենթարկուել են այդ նախագծի մի քանի առանձին կէտերը փոփոխութեան, որովհետեւ յիտազայում առաջ է եկել որոշ տենդենցիա սահմանափակելու ծխական ինքնակառավութեան իրաւունքները, և ուժեղացնել եպիսկոպոսական իշխանութեան վերահսկողութիւնը. Որոշել են ծխականների մասնակցութիւնը ծխական ժողովներում սահմանափակուի ոչ միայն տարիքի կողմից, այլ և նիւթեկան կարողութեան ցենզու. Ծխական ժողովում ուժեղացրած է հոգևոր պաշտօնեանների և նախագահի իրաւունքը, որ վերջիններն ժողովից իրենք կարող են հեռացնել անբարելոյս ծխականներին և առաջարկել փոխարինել նորելով. Սահմանափակուած է նաև ծխականների իրաւունքը եկեղեցու նիւթական միջոցները կարգադրելու նկատմամբ. Մինչեւ անգամ հանուել է ծխական ինքնակառավարութիւնից եկեղեցական կայքի ու գոյքի վերաբերեալ ունեցած կարգադրութեան իրաւունքը:

Արևելան Կայոսի ուժը ուժը մատասարակության մայնաթիւնում

մանաւ է ընթառաջ նախարար մասն ամ մէջ-մէջ ուժու առաջընմ պայման ու հոգեւոր ուսումնարարանների բարեկարգութիւնը. Դեկտեմբերի 7-ին Սարասալի Ալեքսէ Խափուսոսի նախագահութեամբ կայացել է խառն վարչութիւնների յանձնաժողովների երկրորդ նիստը գործադրութեան մէջ դնելու Հոգևոր Սեմինարիանների և գպրոցների նոր կանոնագրութիւնը. Խախարարութեանց ներկայացու-

ցիշները բացասական կարծիք յայտնեցին այդ նոր կանոնագրութեան մասին, ասելով՝ որ թէս շատ ցանկալի է Հոգևոր զպոցների բարեկարգութիւնը (բեֆօրման) և նոյն իսկ կարեոր, բայց այնպէս, ինչպէս նախագծել է ո. Մինօղը՝ հազիւ թէ նպաստակայարմար լինի Նախարարութեանց ներկայացուցիչները յայտնեցին բացասական կարծիք հոգևոր գիմնազիաների վեցերորդ դասարանը աւարտող աշակերտաներին կլասիկ գիմնազիաների եօթներորդ դասարան ընդունելու խնդրի մասին։ Նախարարութեան համար պարզ չէ, թէ Բնշ են ներկայացնում իրանցից վեցդասարաննեան հոգևոր գիմնազիաները և մեքեր պէտք է զեկավարեն այդ տիպի զպոցները, ուստի և հնարաւոր չէ համարում թոյլատրել այդ զպոցն աւարտող սահմերին մտնել կլասիկ գիմնազիան Հոգևոր գիմնազիաներում 74 առարկայից շարաթական 21 յատկացուած է կրօնի դասերին, իսկ 12-ը երգեցողութեան, որից յիտոյ հարց է ծագում, թէ միւս առարկաներից իրաքանչիւրին արգեօք քանի՞ դաս է թողնուած։

Փողովրդական լուսաւորութեան ներկայացուցիչ Վարանցովսկին ցանկութիւն յայտնեց Հոգևոր գիմնազիաների 6-րդ դասարանի դասընթացը հաւասարեցնել կլասիկ գիմնազիայի նոյն դասարանի դասընթացին։ Միայն այդ գէպքում, փորձի համար, նախարարութիւնը թոյլ կը տայ հոգևոր զպոցի 6 դասարանից մտնել կլասիկ գիմնազիայի 7-երորդ դասարանը։ Ալէքսէյ եպիսկոպոսը, իրից յանձնաժողովի նախագահ, յայտնեց նախարարութեանց ներկայացուցիչներին, որ հոգևոր վարչութիւնն անընդունելի է համարում իր համար նախարարութեան պայմանները, ի նկատի առնելով, որ զորանով ծովովդական լուսաւորութեան վարչութիւնը անուղղակի նախապահով մտնում է հոգեւոր վարչութեան կրական գործի մեջ, եւ հոգեւոր գարցոցի բարեկարգութեան փոխարքեն ցնչանում է նօրա ինքնուրովնուրիներ։

### Ա. Գ. Ի. Ս. Կ. Ա. Ն. Ե. Կ. Ե. Ց. Ի.

Ամերիկական եպիսկոպոսական եկեղեցու զինաւոր համագումարը Անցեալ Հոկտ. 25-ին Նիւ Եօրկ քաղաքում կայացել է Ամերիկական եպիսկոպոսական եկեղեցու զինաւոր համագումարը, որն ունի ընդհանուր օրէնսդրական-վարչական բնոյթ և կայանում է իրաքանչիւր երեք տարին լրանալուց։ Նախագահել է եպիսկոպոս ների համագումարին Հարաւային շրջանի Վինսենտ եպիսկոպոսը, իսկ պատգամաւորների ժողովին Բուտոնի երրորդութեան եկեղեցու